ԱՆԱՀԻՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԱԺԻՇՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հայ դպրոցը և լուսավորությունը, երաժշտագիտական դաստիարակությունը ունի դարերի պատմություն: Եվ այն զարգացել է ոչ միայն բուն Հայաստանում, այլև սփյուռքում: Դեռևս ստրկատիրական Հայաստանում /մ.թ.ա. 2-4 դդ/ երաժշտաարվեստը վերելք է ապրել և այդ շրջանում իշխանական պալատներում և հեստանոսական մեհյաններում բացվում է հայ իրականության մեջ 1-ին դպրոցը:

Քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո նոր թափով սկսեց զարգանալ հեգևոր երաժշտությունը: 5-6դդ դարերում ընդլայնվում է քրիստոնեական դպրոցների ցանկը, որում մեծ ուշադրություն էր տրվում երաժշտության դասավանդմանը:

Աստիճանաբար զարգանում է հոգևոր երգարվեստի ցանկը, որի վրա որոշակիորեն ներգործում են գուսանական և ժողովրդական երաժշտությունը:

8-դդ դարում քաղաքական և տնտեսական իրադրության պատճառով արգելակվում է երաժշտամշակութային կյանքի առաջընթացը, միայն 10-դդ դարում զարգանում և նոր որակ է ստանում այն: Երաժշտական կրթությանն ու դաստիարակությանը մեծ տեղ են հատկացվում միջնադարյան համալսարաններում: Այսպիսով, հին և միջնադարյան Հայաստանում բուռն զարգացում է ապրում երաժշտական կրթությունն ու դաստիարակությունը:

19-դդ դարի սկզբներին առաջանում է ձայնագրության նոր համակարգ ստեղծելու անհրաժեշտությունը: Մինչ այդ օգտագործվում էր «8 ձայն և 2 ստեղի» համակցությունը:

Բազմափորձ երաժիշտ-մանկավարժ Հ. Լիմոնջյանի կողմից ստեղծվեց ձայնագրությունների նոր համակարգ: Այդ համակարգը մեկ դար օգտագործվում է հայ դպրոցում:

19-դդ դարի 2-դդ կեսին լուսավորչական շարժմանը զուգնթաց զարգանում է երաժշտական դաստիարակությունը, հրատարակվում են պարբերաթերթեր, հիմնվում են ընկերություններ, որոնց անդամները տարբեր հայկական բնագավառներում կարդում են արվեստի և երաժշտության վերաբերյալ դասախոսություններ:

Կազմակերպվում են համերգներ, նպաստելով ժողովրդի երաժշտական դաստիարակության զարգացմանը:

1874 թ. Դ. Կաթողիկոսի հրավերով էջմիածին է մեկնում մանկավարժ-երաժիշտ Ն. Թավշջյանը, որտեղ նա բացում է դպրոց: Այստեղ մեկ տարի սովորելուց հետո դասընթացի մասնակիցները ստանում են երաժիշտ- մանկավարժի վկայական և տիրապետելով Լիմոնջյանի հայկական ծայնագրության համակարգին, վերադառնում են իրենց թեմերը և նպաստում երաժշտական դաստիարակության տարածմանը:

1874թ. հրատարակվում է Թաղչյանի «Դասագիրք եկեղեցական դաստիարակության հայոց» ծեռնարկը, որը առաջին երաժշտական գործիքն է: Մանրամասն չվերլուծելով 1-ին դասագրքի կառուցվածքը և բովանդակությունը, անհրաժեշտ է նշել, որ այն բացի պատմական արժեք ներկայացնելուց, չնայած որոշ թերությունների, և իր ծավալով, և ծևով, և մատչելիությամբ հնարավորություն էր տալիս կարճ ժամանակահատվածում յուրացնելու հայկական ծայնագրության բարդ համակարգը:

19-րդ դարի վերջին երաժշտության դաստիարակության բարելավման հիման վրա ստեղծվեցին մի քանի որակյալ երգչախմբեր, որոնք ունեին պրոֆեսիոնալ բարձր մակարդակ:

20-րդ դարի սկզբին ստեղծվում են բարենպաստ պայմաններ երաժշտական կրթության և դաստիարակության հետագա զարգացման համար:

Նախախորհրդային շրջանում ստեղծված երգարանները ու երաժշտական դասագրքերը կազմված էին հաշվի առնելով հայ երաժշտաարվեստի առանձնահատկությունները և առաջավոր եվրոպական երկրների մանկավարժական պահանջները:

Խորհրդային կարգերի ծավալմամբ, Հայաստանում ստեղծվեց լայն հնարավորություն մասսայական երաժշտական դաստիարակության և կրթության համար:

Խորհրդային շրջանի մեծ կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը խոսելով երեխաների երաժշտական դաստիարակության մասին, քննադատել է այն տեսակետը, որ դպրոցականներին պետք է մատուցել հատուկ պարզ և տարրական երաժշտություն: Նշելով. «Չի կարելի երեխաներին արհեստականորեն անջրպետել դասական երաժիշտներից, մինչ այն հիմնավորումով, թե գրված է մեծահասակների համար: Երեխան կարող է և պետք է լսի Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի, Բեթհովենի, Մոցարտի, Շտրաուսի ստեղծագործությունները»:

30-ական թվականների վերջին Հայաստանում ստեղծված երաժշտական ծրագիրը, որում քիչ տեղ էր հատկացվում հայկական ազգային

երաժշտական և կոմպոզիտորների ստեղծագործություններին, սահմանեց հինգբալյան համակարգը: 70-ական թվականներին Երևանում պրոֆ. Յուզբաշյանի գլխավորությամբ ստեղծվեց երաժշտության դաստիարակության էքսպերիմենտալ լաբորատորիան, որի կազմում ընդգրկվեցին հանրապետության լավագույն երաժիշտ-մանկավարժները, կոմպոզիտորները, հոգեբանները և հանրակրթական դպրոցների ուսուցիչները: Լաբորատորիայի արդյունքը այն էր, որ տեղայնացվեց ռուս անվանի կոմպոզիտոր և մանկավարժ Կաբալևսկու երաժշտական ծրագիրը, կազմեցին երաժշտության դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ձայնագրությունների կոմպլեքս այդ ծրագիրը իրականացնելու համար: Այն նպաստեց երաժշտական կրթության և դաստիարակության առաջընթացին և որակի բարելավմանը:

Այնուամենայնիվ 80-ական թվականներին խորհրդային երկրում մեծ ուշադրություն էր նվիրվում երաժշտության դաստիարակության հիմնահարցին, կազմակերպվում էին հանրապետական և միութենական գիտաժողովներ նվիրված երաժշտական կրթության և դաստիարակության հիմնահարցին:

Այսօր էլ հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում հիմնականում օգտագործվում է այդ շրջանում ստեղծված երաժշտական ծրագրերն ու դասագրքերը, մեթոդական ծրագրերը: Վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական, սոցիալ-տնտեսական վերափոխումները ենթադրում են նաև կրթության և դաստիարակության բարեփոխումներ: Վերակառուցումը այսօր ընդգրկել է հասարակական կեցության բոլոր ոլորտները, կյանքի կոչել անկախության գաղափարները և հոգևոր իդեալների վերականգնումն ու անհրաժեշտությունը:

Վերջին տարիներին Հայաստանի կրթական համակարգում կատարվել են մի շարք բարեփոխումներ: Երաժշտագեղագիտական դաստիարակության մեջ նույնպես կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ: 90-ական թվականներին անհրաժեշտություն առաջացավ ստեղծել նոր երաժշտական ծրագիր: 1992 թ. պրոֆ. Յու. Յուզբաշյանը ստեղծեց երաժշտության ծրագիր հանրակրթական դպրոցի տարրական դասարանների համար, որում պահպանվել էին խորհրդական շրջանում ստեղծված երաժշտության ծրագրի լավագույն բաժինները: Ծրագիր կազմելիս հաշվի է առնվել բազմադարյան հայ դպրոցի ծեռք բերումներն ու առաջավոր փորձը: Ծրագրի նպատակն է ստեղծել երաժշտական կրթության անընդհատ համակարգ որպիսին գոյություն ուներ մի շարք առաջավոր երկրներում: Վերջին տարիներին կազմվել են մանկական և ժողովրդական երգերի երգարաններ, հրատարակվել են հայ կոմպոզիտորների կողմից գրված երաժշտական ստեղծագործություններ:

Երաժիշտ-մանկավարժը պարտավոր է ստեղծագործաբար մոտենալ երեխաների երաժշտական կրթության և դաստիարակության հիմնահարցին:

Երաժիշտ-մանկավարժից պահանջվում է ծանոթանալ երաժշտական ծրագրին, դրա հիման վրա կազմել ըստ դասարանների թեմատիկ պլանները: Նախախորհրդային շրջանում գոյություն չունեին միասնական ուսումնական ծրագրեր և յուրաքանչյուր կրթօջախում տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչները իրենք էին կազմում առարկայական ծրագրեր:

Հայաստանում անկախության հռչակման և ազգային դպրոցի բարենորոգման շնորհիվ անհրաժեշտություն է առաջացել վերափոխել տարբեր, այդ թվում նաև երաժշտական ծրագրեր:

Բնական է, որ այսօր երեխաները չպետք է սովորեն Խորհրդային երկրի սովետական, պիոներական և կոմունիստական երգեր և ստեղծագործություններ:

Այսօր սովետական հանրակրթական դպրոցից ձեռք բերված հաջողությունները չեն բավարարում ոչ ուսուցիչներին և ոչ էլ աշակերտներին: Այդ անբավարարությունը բացահայտորեն զգացվում է արտահայտման ամենատարբեր ձևերում, մամուլի բազմաթիվ ելույթներում, համամիութենական խորհրդակցություններում և կոնֆերանսներում, պաշտոնական փասթաթղթերում: Մեծ թվով մանկավարժներ, նշված անբավարարության ազդեցությամբ, իրենց ջանքերն ուղղում են պարտադիր և ֆակուլտատիվ նոր ծրագրեր նախագծելուն, նոր դասագրքեր ու մեթոդական մշակումների ստեղծմանը: Ըստ այդմ.

1. Ստեղծագործության բովանդակությունը պետք է համապատասխանի տվյալ տարիքի աշակերտների զարգացման աստիճանին և կապվի դպրոցական ծրագրի հետ:
2. Ձայնածավալը, ռիթմիկ և ինտոնացիոն կառուցվածքը պետք է համապատասխանի աշակերտների երաժշտական ունակություններին, կարողություններին ու հմտություններին:
3. Ստեղծագործությունը պետք է ունենա գեղագիտական բարձր մակարդակ:

Վերջին տարիներին հրատարակվեցին նաև մի շարք մանկական երգարաններ, որոնցում մեծ տեղ է հատկացվում ժողովրդական, ազգագրական, ֆիդայական, հոգևոր և հայրենասիրական երգերին ու խմբերգերին:

Երաժիշտ-մանկավարժը հաշվի առնելով հայեցի դաստիարակության արդի պահանջները պետք է կարողանա համալրել երաժշտության ծրագիրը օգտվելով նշված երգահաններից:

Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում երաժշտական պարապմունքները ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է ստուգել և որոշել երեխաների նախադպրոցական երաժշտական դաստիարակության աստիճանը և դրա հիման վրա ճիշտ պլանավորել և անցկացնել կրտսեր դպրոցականների երաժշտական կրթությունը և զարգացումը:

Ուսուցիչը պետք է ձգտի, որ աշակերտները հնարավորին չափ հաճախ պատասխանեն ընթացքում առաջացած հարցերին և ոչ թե բավարարվեն ուսուցչից ստացած պատրաստի, ընթացքում առաջացած հարցերին:

Ուսուցչի կողմից դասարանում առաջացրած ակտիվությունը կարող է լինել մանկավարժական վարպետության կարևորագույն չափանիշներից մեկը:

Երաժշտության ուսուցիչը պետք է լինի կրթված մանկավարժ: Պետք է աշակերտի մեջ արթնացնի հետաքրքրություն և սեր խմբական երգի նկատմամբ: Երաժշտության դասերը դպրոցում պետք է անցկացվեն հատուկ կահավորված դասարաններում /դաշնամուր կամ որևէ գործիք, ձայնագրիչ և այլն/:

Դպրոցը պետք է ունենա երգչախումբ: Ամռանը պետք է երեխաներին տալ հանձնարարություններ լսել երաժշտություն և մտորել նրա մասին: Տարվա վերջին օրը կդառնա դաս-համերգ ուսուցիչների և երեխաների համար:

Գրականություն

1. Լ. Գ. Դմիտրիևա, Ն. Մ. Չերնոիվանենկո - «Մեթոդական դաստիարակությունը դպրոցում»: Մանկավարժական կրթություն, Մոսկվա 2000 թ.
2. Մ. Մախչյան - «Մանկավարժության ընդհանուր հիմունքներ»
3. Կաբալևսկի - «Երաժշտական ծրագիր»
4. Սուխոմլինսկի - «Երաժշտական ծրագրի հիմնական սկզբունքները ու մեթոդները»